

**Ֆրանսահայ հեղինակավոր «Չոբանյան» հաստատությունը մտահոգված է ջավախքահայ քաղաքական ակտիվիստ Վահագն Չախալյանի ճակատագրով**

Ֆրանսիայում գործող հայկական հեղինակավոր «Չոբանյան» հաստատությունն իր մտահոգությունն է հայտնել ջավախքահայ քաղաքական ակտիվիստ Վահագն Չախալյանի շուրջ ընթացող վերջին զարգացումների կապակցությամբ:

Ս.թ. օգոստոսի 13-ին «Չոբանյան» հաստատությունը «Վահագն Չախալյանը մահվան սպառնալիքի տակ» վերնագրված նամակ է հղել Ֆրանսիայի Ազգային ժողովում «Ֆրանսիա-Վրաստան» բարեկամական խմբի նախագահ Դենիել Պոլին: Ստորել ներկայացնում ենք նամակի թարգմանությունը՝ կատարված «Երկիր» միության կողմից:

**ՎԱՀԱԳՆ ՉԱԽԱԼՅԱՆԸ ՄԱՀՎԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ**

Պրն Նախագահ,

Դուք ստանում եք այս ահազանգող նամակը, որովհետև Վրաստանում քանտարկված մի մարդ գտնվում է մահավան սպառնալիքի տակ:

Դա Վահագն Չախալյանն է՝ «Միասնական Ջավախք» ժողովրդավարական շարժման առաջնորդը:

Մեզ ահազանգել են «Երկիր» միությունից առ այն, որ վրացական իշխանությունները իրականացնում են հստակ ծրագիր՝ ուղղված ջավախքահայության արտագաղթի խրախուսմանը եւ հայաբնակ տարածքների վրացականացմանը:

2008թ. հուլիսին ձերբակալված ջավախքահայության քաղաքացիական շարժման առաջնորդը քանտում է այն բանի համար, որ համարձակվել է պահանջել տարածաշրջանում հայերենին վրացերենին համահավասար վարչական լեզվի կարգավիճակ տալ: Հայկական եկեղեցիները Թբիլիսիում վերածվում են վրացական ուղղափառ եկեղեցիների վրացական իշխանությունների ուղղակի մեղսակցությամբ:

Այս հալածանքների համատեքստում Վահագն Չախալյանը խորհրդանշական թիրախ է դաձել ոստիկանության եւ դատարանի ագրեսիայի համար:

«Երկիր» միությունը տեղեկացրել է մեզ, որ ըստ հավաստի աղբյուրների վրացական իշխանությունները կարող են բռնություն գործադրել «Միասնական Ջավախք» ժողովրդավարական շարժման առաջնորդ Վահագն Չախալյանի նկատմամբ՝ նրան չեզոքացնելու կամ վերացնելու նպատակով:

Այդ տեղեկության հավաստիության անուղղակի ապացույց է այն, որ վերջերս՝ (հուլիսի 31-ին) Վահագն Չախալյանին Թբիլիսիի Գլխանիի №8 մեկուսարանից տեղափոխելը Ռուսթավի քաղաքի №2 գաղութ, որտեղ հնարավոր սադրանք կազմակերպելու առումով հնարավորությունները ավելի բարենպաստ են, եւ դա այն պայմաններում, երբ նրա նկատմամբ դատավճռի բողոքարկումը ընթացքի մեջ է:

Ֆրանսիան, որպես մարդու իրավունքների երկիր, չի կարող մնալ անտարբեր այս իրավիճակի նկատմամբ:

Արդ, մենք հորդորում ենք Ձեզ միջամտել՝ Ձեր վրացի պաշտոնակիցներից պահանջձեղով, առաջին հերթին՝ անմիջապես ապահովել Վահագն Չախալյանի ֆիզիկական անվտանգությունը, իսկ այնուհետև՝ երաշխավորել անկողմնակալ դատավարության նրա իրավունքը՝ հնարավորություն տալով նրան պաշտպանվելու իր կողմից ընտրված փաստաբանի միջոցով, հնարավորություն, որից նա առայսօր զրկված է:

Հարգանքով՝

**Ժան Վարուժան Սրապյան**

Հիմնադիր նախագահ,

Ալֆորտվիլ քաղաքի ավագանու նախկին անդամ

*Նամակի ֆրասերեն տեքստը կարելի է գտնել «Չոբանյան» հաստատության կայքում՝*  
<http://www.tchobanian.org/communique0001005f.html>